

## ԲԱՌԱՐԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆԻ ԵՐԿԵՐՈՒՄ ԳՈՐԾԱԾՎԱԾ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԵՎ ՕՏԱՐ ԲԱՌԵՐԻ

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հրատարակությամբ լույս տեսավ ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Բ. Գասպարյանի կազմած «Քաջառուր Արովյանի երկերի բառարանը» (առանձնատիպ «Ք. Արովյանի երկեր»-ի IV հատորից)։

Նման բառարանի կարիքը շատ վաղուց էր զգացվում։ Պետք է ասել ճշմարտությունը, որ Արովյանի երկերը կարդացողներից շատ քչերն էին լրիվ հասկանում մեր մեծ գրողին, էլ չենք խոսում աշակերտության մասին, որի համար, առանց բառարանի, Արովյանի գործերի շատ նախադասություններ մնում էին ուղղակի անլուծելի։ Բասագրքերում զետեղված հատուկ կենտ բացատրություններն էլ չէին գոհացնում ընդհանուր պահանջը և երբեմն էլ ոչ ճիշտ կերպով էին տալիս բառերի իմաստը։ Այդ տեսակետից Բ. Գասպարյանի կազմած բառարանը մեծ օգնություն է բուրիս համար՝ լրիվ հասկանալու Ք. Արովյանին։

Արովյանի երկերի բառարանը կազմելու համար Բ. Գասպարյանը հիմք է ընդունել «Վերք Հայաստանի» վեպը և այնուհետև շատ բարեխղճությամբ ու գիտնականի համբերատարությամբ ուշի-ուշով նայել է մնացած գործերը, անտիպ աշխատությունները, օրագրերն ու նամակները և դուրս բերել 3000-ից ավելի բարբառային, օտար բառեր ու կապակցություններ։ Դրանցից միայն 2500-ը հանված է «Վերք Հայաստանի»-ից, Հասկանալի պատճառներով՝ բառարանում տեղ չեն գտել գրական բառերը։

Բառարանում դրված են բառերի ու կապակցությունների միայն այն առումները, որոնց հանդիպում ենք Արովյանի երկերում։ «Այսպես, օրինակ, քաշվել բառը, — գրված է բառարանին կցված «Երկու խոսքի» մեջ, — որ արարատյան բարբառում ունի 10-ից ավելի առումներ (նիհարել, հեռանալ, նկարվել, կշռվել և այլն)։ Արովյանի մոտ գործ է ածվել միայն պատկանելի իմաստով։ Բառարանում տրված է միայն այս վերջին իմաստը»։

Բառարանի ամենաարժեքավոր կողմնային է, որ այն կրում է տեքստուալ բնույթ։ Բառի իմաստը ճիշտ և լրիվ հասկանալու համար բառը վերցված է կապակցությունների մեջ, այնպես որ տվյալ բառը հասկանալու համար այլևս ոչ մի տարակուսանքի կամ կասկածանքի տեղ չի մնում։ Առանց այս ձևի մոտեցման, Արովյանի շատ բառերի երկրորդական առումներն կամ նրանց փոխաբերական իմաստները մեզ համար կմնային նորից անհասկանալի։ Օրինակ՝ Խլանի բառի առաջին իմաստն է՝ առանց աղի (ալանի կերակուր)։ Արովյանը գործ է ածել նաև փոխաբերական իմաստով՝ տհաս, պակասամիտ (ալանի խել)։

Ազար 1. վիշտ, «Բալֆի քե մեկ ազար, մեկ մուրօզ օւնի սրտումը»։  
2. ցավ, հիվանդություն։ «Մարդ, անասուն սովի, ցրտի ձեռիցը ազար ընկավ»։

Բիրադի 1. բուրբուր, միատեղ. 2. հանկարծ, մեկեն։ «Ուշքս վրաս չեք, Նզիսաբեք բիրադի Լնպես դիպավ ինձ»։


Արովյանն իր աշխատություններում շատ է գործածել օտար բառեր՝ արաբերեն, ադրբեջաներեն, ասորերեն, գերմաներեն, եբրայեցերեն, թաթարերեն, լատիներեն, հունարեն, պարսկերեն, ռուսերեն, վրացերեն, տաճ-

կերեն և Ղարաբաղի ու Մուշի բարբառներին մի շարք այլ բառեր ու կապակցություններ: Բառարանում օտար բառերի դիմաց նշված է, թե տվյալ բառը հր լեզվին է անցել: Դանաքեռի խոսակցական լեզվին և արարատյան բարբառին ոչ հարազատ բառերը սկզբին կրում են աստղ նշանը, իսկ կայուն կապակցությունները՝ գծիկ (—) նշանը: Աբովյանի երկերի բառարանի բառարանագրական այսպիսի նորմավորումը աշխատությունը դուրս է բերում բառարանային սահմաններից և դարձնում նաև Դանաքեռի բարբառի ուսումնասիրման մի կարեւոր աղբյուր:

Ընկ. Գասպարյանի այս բառարանը թեպետ ծավալով փոքր (4 տպագրական մամուլ), բայց շատ շնորհակալ մի աշխատանք է և մի ներդրում է աբովյանագիտության և մեր հայ բառարանագրության գործում: Առաջին անգամ է, որ լույս է տեսնում Աբովյանի երկերի վերաբերյալ նման բառարան: Բառարանում մենք հանդիպում ենք բազմաթիվ բառերի ու բառառումների, որոնք առաջին անգամն են տեղ գտնում բառարանային դրականության մեջ: Շատ բառեր, որոնք երկար ժամանակ իրենց տարբեր իմաստներով մնացել էին անհասկանալի ու անբացատրելի՝ ընկ. Գասպարյանի կողմից հայտարարվում ու մեկնաբանվում են առաջին անգամ:

Բառարանի միակ թերությունն այն է, որ հեղինակը բառարանում տեղ չի տվել Աբովյանի գործածած մի շարք տառերին բառերի, որովհետեւ, ինչպես ընկ. Գասպարյանն է ասում իր «Երկու խոսքում», տառերին բառերի բացատրությունը ինքը Աբովյանն է տվել հենց նույն տեքստում: Բայց քանի որ հեղինակը կազմել է Խաչատուր Աբովյանի երկերի հատկապես բարբառային և օտար բառերի բառարան, տառերին բառերը նույնպես տեղ պիտի գտնեին բառարանում, որպեսզի կատարված աշխատանքը համապատասխաներ գրքի վերնագրին և բառարանը լիներ ավելի ամբողջական:

Չնայած այս թերությանը, բառարանը մի անհրաժեշտ ձեռնարկ կդառնա մեր մասսայական դպրոցների աշակերտության, ուսուցչության և ընդհանուր առմամբ բոլոր նրանց համար, ովքեր կուսումնասիրեն Աբովյանի երկերը: Միայն դավալի է, որ բառարանը լույս է տեսել շատ սահմանափակ տիրաժողով (2000 օրինակ): Նկատի ունենալով այս բառարանի մասսայական լայն պահանջը, ցանկալի է, որ հետագայում բառարանը լրացվի, ընդգրկվի Աբովյանի գործածած բոլոր բառերը և լույս ընծայվի որպես մեր մեծ լուսավորչի գործերի ամբողջական, լրիվ բառարան՝ ավելի մեծ տիրաժողով:



Ա. ՔՈՉՈՑԱՆ